«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

1 ՆՊԱՏԱԿԸ

Սույն կանոնների նպատակն է սահմանել «Արդշինբանկ» ՓԲԸ երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոնները:

2 ԿԻՐԱՌՄԱՆ, ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

2.1. Սույն կանոններով սահմանված պահանջները կիրառվում են Բանկի համապատասխան կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում ընդգրկված աշխատողների կողմից:

3 ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

4 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

«Բանկ»՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,

«Սպասարկող մասնագետ»՝ Բանկի Մասնաճյուղի կամ Հաճախորդների սպասարկման վարչության աշխատակից,

«հաճախորդ»՝ վարկ ստանալու նպատակով Բանկ դիմած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,

«վարկառու»՝ Բանկից վարկ ստացած հաճախորդ,

«երաշխավոր»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը երաշխավորության պայմանագրով Բանկի առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել վարկառուի կողմից իր պարտավորությունների չկատարման դեպքում,

5 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7 ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8 Սպասարկող մասնագետը երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության վերաբերյալ այլ պայմանագիր (վարկային կամ այլ պրոդուկտի վերաբերյալ պայմանագիր) կնքելուց առաջ երաշխավորին ծանոթացնում է երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի էական պայմաններին, վարկառուի (համավարկառուի, պարտապանի) կողմից իր պարտականությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատթարացման, երաշխավորի պարտավորության, դրա չափի, երաշխավորի վերաբերյալ վարկային ռեգիստր և վարկային բյուրո տեղեկատվության տրամադրման և վեճերի լուծման մեխանիզմների վերաբերյալ:

9 Սպասարկող մասնագետը երաշխավորին տրամադրում է երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի (վարկի մարման ժամանակացույցի առկայության դեպքում նաև վարկի մարման ժամանակացույցի) մեկական օրինակ: Ընդ որում, երաշխավորության պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումի դեպքում նշված դիմումը ստորագրելուց հետո Սպասարկող մասնագետը տրամադրում է վարկային պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումի մեկական օրինակ, իսկ վարկի մարման ժամանակցույցի առկայության դեպքում այն ուղարկվում է երաշխավորին՝ վերջինիս ընտրած հաղորդակցման եղանակով: Երաշխավորության պայմանագրի և երաշխավորության պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումի ստորագրման հետ միաժամանակ երաշխավորը որպես առանձին փաստաթուղթ ստորագրում է Երաշխավորության տրամադրման հաստատումը, որտեղ հավաստում է, որ ծանոթացել է սույն կանոններին Բանկի պաշտոնական կայքէջից:

10 Բանկը երաշխավորի պահանջով երաշխավորությամբ ծագող հարաբերությունների ամբողջ ընթացքում տրամադրում է նրան վարկի (պարտավորության) մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն:

11 Բանկը երաշխավորի հետ հաղորդակցվում է հետևյալ կարգով՝

11.1 Երաշխավորի հետ հաղորդակցումը կատարվում է գրավոր ձևով,

11.2 Բանկը երաշխավորին տրամադրում է հաղորդակցման առնվազն երեք եղանակի ընտրության հնարավորություն և բացատրում ընտրված միջոցով հաղորդակցման էությունը,

11.3 Վարկառուի՝ մարման ժամանակացույցով սահմանված պարտավորության կատարման օրից առնվազն 1 օր առաջ Բանկը երաշխավորին ծանուցում է մարման ենթակա պարտավորության առկայության մասին,

11.4 Բանկը երաշխավորին ծանուցում է երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի պայմանների էական փոփոխությունների (տոկոսադրույք, միջնորդավճար, տույժ, տուգանք, ժամկետ, վարկի չափ (միայն լրացուցիչ վարկավորման դեպքում)) մասին դրանց ուժի մեջ մտնելուց յոթ օր առաջ,

11.5 Բանկը երաշխավորին ծանուցում է նաև երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրի դադարեցման մասին դրա դադարեցումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում,

11.6 Պարտապանի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության կետանցի դեպքում Բանկը երաշխավորին տեղեկացնում է այդ մասին ոչ ուշ, քան կետանցի հաջորդ օրը՝ նշելով ընդհանուր պարտավորության չափը և դրա բացվածքը՝ առանձին պարտավորության մայր գումարը, պարտավորության մնացորդը, տոկոսները, տույժերը, տուգանքները (առկայության դեպքում):